# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 1
## 22.01.2026թ. կնքված N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-26/06» ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

**ք. Տաշիր** **« 02 » փետրվարի 2026թ.**

«ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Է. Արշակյանի, որը գործում է «ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի» կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՓԱՅԼՔ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Մովսիսյանի, որը գործում է «ՓԱՅԼՔ» ՍՊԸ-ն կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 22.01.2026թ. կնքված N ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-26/06 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.14 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ***Համաձայնագրի առարկան***

1.1 Հիմք ընդունելով կողմերի միջև 2026թ. հունվարի 22-ին կնքված ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար Տաշիր համայնքի գիշերային լուսավորության ցանցի շահագործման սպասարկման ծառայությունների մատուցման N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-26/06» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.14 կետերը կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1.1.1 Պայմանագիրը լրացնել N2 «Վճարման ժամանակացույց» հավելվածով՝ համաձայն սույն համաձայնագրի N 1 հավելվածի:

2. ***Համաձայնագրի գործողության ժամկետը***

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագրին ուժի մեջ մտնելու պահից:

3. ***Այլ պայմաններ***

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական, որոնցից մեկ օրինակը հանձնվում է Կատարողին, իսկ մյուս օրինակը՝ Պատվիրատուին:

4. **ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

| **Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ** | **Կ Ա Տ Ա Ր Ո Ղ** |
|---|---|
| ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան | «ՓԱՅԼՔ» ՍՊԸ |
| ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94 | ք. Տաշիր, Վան 1 |
| ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն | ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ |
| Հ/Հ 900272320053 | Հ/Հ 220143330235000 |
| ՀՎՀՀ 06966995 | ՀՎՀՀ 06948686 |
| ------------------------------ Է. Արշակյան | ------------------------------ Հ. Խանադյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 1*
*«02» փետրվարի 2026թ. կնքված N 1 համաձայնագրի*
*Հավելված N 2*
*« 22 » հունվարի 2026թ. կնքված*
*N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-26/06»*
*ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50231200/ 501 | Տաշիր համայնքի գիշերային լուսավորության ցանցի շահագործման սպասարկման ծառայություններ | ... % | 2700000 | 5400000 | 8100000 | 10800000 | 13500000 | 16200000 | 18900000 | 21600000 | 24300000 | 27000000 | 30000000 | 30000000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900272320053
ՀՎՀՀ 06966995

------------------------------- Է. Արշակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«ՓԱՅԼՔ» ՍՊԸ
ք. Տաշիր, Վան 1
ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
Հ/Հ 220143330235000
ՀՎՀՀ 06948686

------------------------------- Հ. Խանաղյան
(ստորագրություն)
Կ.Տ.

02 փետրվարի 2026թ.

Թիվ 014-16

# ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
## Թիվ 23 14 40 867887/18
*(որակավորման ապահովում)*

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից թիվ «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-26/06» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ՓԱՅԼՔ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) կողմից թիվ «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-26/06» պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 4.500.000 (չորս միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Երաշխիքի գումարը վճարելուց հաշվի է առնվում պայմանագրի կատարման շրջանակներում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված և պրինցիպալի կողմից երաշխիքը տված անձին ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության (արձանագրությունների) հիման վրա երաշխիքի գումարից կատարված նվազեցումները:

Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի 900275081108 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է մինչև 31/12/2026թ.-ին հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ, քան 31 մայիսի 2027թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ baghdasaryanart@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-26/06» ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հացեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը,

3) Պայմանագրի շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը (արձանագրությունները) կամ դրա (դրանց) պատճենները:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Տաշիր» մասնաճյուղի կառավարիչ Գուրգեն Բուդաղյան

*Կատարող՝*
*Հարություն Յափուճյան*
*Հեռ.՝ 010 31-88-88 (ներքին՝ 8377)*

02 փետրվարի 2026թ.

Թիվ 014-17

# ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
# ԹԻՎ 23 14 40 867887/19

*(պայմանագրի ապահովում)*

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ՓԱՅԼՔ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև թիվ «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-26/06» պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին անվերապահորեն վճարել 3.000.000 (երեք միլիոն) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի 900275081108 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է մինչև 31/12/2026թ.-ին հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ, քան 31 մայիսի 2027թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ baghdasaryanart@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-26/06» պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Տաշիր» մասնաճյուղի կառավարիչ Գուրգեն Բուդաղյան

*Կատարող՝*
*Հարություն Յափունջյան*
*Հեռ. 010 31-88-88 (ներքին՝ 8377)*